ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՇԻՐԱԿԱՄՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

N°—Ե -03/114 գ. Շիրակամուտ

«16» 05. 2019թ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ղուկասյան

Ներկայացնում եմ Շիրակամուտ համայնքի ղեկավարի թիվ 38-Ա և 39-Ա որոշումները:

Առդիր 2 էջ:

Համայնքի ղեկավար՝ Ա.Երանոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շիրակամուտ համայնք, հասցե գ.Շիրակամուտ

Հեռախոս 0255-6-15-01

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

,,16'' մայիսի 2019 թվականի N39-Ա

Վ.ՀԱՄԲԱՐՅԱՆԻՆ ՔԱՆԴՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Շիրակամուտ համայնքի ավագանու 29.11.2018թ-ի,,Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շիրակամուտ համայնքում 2019 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակները, դրույքաչափերը սահմանելու մասին'' թիվ 39 -Ն որոշմամբ, հաշվի առնելով Վաչագան Գևորգի Համբարյանի 16.05.2019թ-ի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1.Վաչագան Գևորգի Համբարյանին տալ քանդման թույլտվություն , Շիրակամուտ համայնքի վարչական տարածքում գտնվող , անհատույց հատկացված ժամանակավոր կացարանը քանդելու համար:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար՝ Ա.Երանոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շիրակամուտ համայնք, գ. Շիրակամուտ
հեռ.՝ 025561501

ՈՐՈՇՈՒՄ

13 մայիսի 2019թվականի N 38-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի N 470-Ն որոշման և 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Նորոշման կարգի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ կետերով, 13-րդ կետի «բ)» ենթակետով և 22.1 կետի պահանջներով՝

Որոշում եմ.

1. Օրինականացնել Ստեփան Ռաֆիկի Պապոյանին, Սուսան Աղասիի Պապոյանին և Էդմոն Ստեփանի Պապոյանին պատկանող Լոռու մարզի Շիրակամուտ համայնքի 23-րդ փողոցի 18-րդ հասցեի բնակելի կառուցապատման հողամասում (կադաստրային համար՝ 06-087-0068-0004)՝

1) 1985 թվականին ինքնակամ կառուցած բնակելի տունը 131,75քմ, նկուղ՝ 36,71քմ, աստիճանահարթակը՝ 5,08քմ, ծածկարանը՝ 19,48քմ,հավանոցը՝ 4,05քմ,անասնագոմը՝ 18,82քմ, ծածկարանը՝ 16,38քմ, մառանը՝46,5քմ, և ավտոտնակը 18,48քմ արտաքին մակերեսներով,

2) 2005 թվականին ինքնակամ կառուցած անասնագոմը՝ 5,76քմ, արտաքին մակերեսներով:

2. Սույն որոշման 1-ին կետի 1-ին և 2-րդ ենթակետերում նշվածշինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էականխախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Հաշվի առնելով, որ սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետում նշված ինքնակամ շինությունները կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման համար վճար չի գանձվում:

4. Հաշվի առնելով, որ սույն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետում նշված 5,76 քմ ընդհանուր արտաքին մակերեսներով ինքնակամ շինությունը կառուցվել է 2001 թվականի մայիսի 15-ից հետո, օրինականացման համար Շիրակամուտի համայնքապետարանի 900245168126 հաշվեհամարին վճարել 1728 (մեկ հազար յոթ հարյուր քսաներեք) դրամ:

5. Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԵՐԱՆՈՍՅԱՆ